

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գերակա խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչներին նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ շարունակվում են կառուցման աշխատանքները և 2014 թվականին կատարվել է շուրջ 2.0 մլրդ. դրամի աշխատանքներ: 2014 թվականի հունիսի 14-ին շահագործման են հանձնվել <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերի համար նախատեսված 3 շենքերը:

Կոմերցիոն օդաչուների պատրաստման նպատակով՝ 2014 թվականի հունվարի 15-ից մինչև 24-ը թվով 9-ը օդաչու-ուսանողների համար կազմակերպվել է վերգետնյա պարապմունքներ, որի ավարտից հետո սկսվել են ուսումնավարժանքային թռիչքներ: Առ այսօր իրականացվել է 548 թռիչքային ժամ պրակտիկա: Օդաչու-ուսանողներից թվով 5-ը ավարտել են թռիչքային պրակտիկան, այնուհետև հունիսի 11-ին Գլխավոր վարչության կողմից նրանց տրամադրվել է կոմերցիոն օդաչուի (CPL) վկայականներ և հունիսի 26-ին նրանք ստացել են ավարտական դիպլոմներ:

Աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններին գործունեության թույլտվության տրամադրման նպատակով 2014 թվականի մարտի 21-ին Գլխավոր վարչության պետի թիվ 85-Ա հրամանով <<Հայաերոնավիգացիա>> փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրվել է Օդային երթևեկության կազմակերպում, Աերոնավիգացիոն կապ և դիտարկում, Աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայության մատուցում գործառույթների իրականացնելու թույլտվություն, իսկ 2014 թ. հունիսի 16-ին Գլխավոր վարչության պետի թիվ 163-Ա հրամանով <<Զվարթնոց>> ավիաօդերևութաբանական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրվել է Աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովում իրականացնելու թույլտվություն:

Ավարտվել է Եվրոպական Հանձնաժողովի կողմից հաստատված “Air Operations” կանոնակարգի տեղայնացման և կիրառման գործընթացը և համաձայն Գլխավոր վարչության պետի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 227-Ա հրամանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ից ուժի մեջ է մտել <<ԱՐՄ-Էյր Օպերեյշն>> կանոնակարգը՝ Միացյալ ավիացիոն իշխանությունների/Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության <<Կոմերցիոն օդաչուների շահագործում>>:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի հետագա զարգացումն ապահովելու նպատակով Գլխավոր վարչության կողմից շարունակվել է <<Բաց երկնքի>> քաղաքականության իրականացումը, ինչի արդյունքում 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն

օդային տրանսպորտով տեղափոխվել է 2.082.755 ուղևոր, ինչը 2013 թվականի ավել է 18.5 % -ով:

Երկկողմանի միջազգային կապերն ընդլայնելու նպատակով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով`

- 1) «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը, որը ստորագրվել է 2012 թվականի նոյեմբերի 29-ին Երևան քաղաքում, ուժի մեջ է մտել 2014 թվականի մարտի 4-ին,
- 2) «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի նիստում, ներկայումս գտնվում է ներպետական ընթացակարգերի փուլում,
- 3) 2014 թվականի մայիսի 19-ից 22-ն Իրանի Իսլամական Հանրապետության ավիացիոն իշխանությունների պատվիրակության հետ Երևանում (ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում) քննարկվել են երկու երկրների միջև օդային հաղորդակցությունների ազատականացման և առկա սահմանափակումների վերացման հարցերը: Բանակցությունների արդյունքներով, 2014 թվականի մայիսի 22-ին ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որով երկու կողմից ցանկացած թվով նշանակված ավիափոխադրողներին թույլատրվել է իրականացնել կանոնավոր չվերթներ դեպի ՀՀ-ի ԻԻՀ-ի տարածքում գտնվող ցանկացած քաղաքներ՝ շաբաթական 50 չվերթ հաճախականությամբ:
- 4) 2014 թվականի հունիսի 11-ին Վիեննայում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև օդային տրանսպորտի մասին» համաձայնագիրը:
- 5) 2011 թվականի հոկտեմբերի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին:
- 6) 2014 թվականի նոյեմբերի 18-ից 21-ը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) հովանու ներքո կազմակերպված Օդային հաղորդակցությունների շուրջ բանակցությունների կոնֆերանսի (ԻԿԱՆ/2014) շրջանակներում տեղի են ունեցել երկկողմանի բանակցություններ Լեհաստանի, Իսլանդիայի, Նիդերլանդների, Ավստրալիայի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Հունաստանի, Սինգապուրի, Կատարի Պետության, Թաիլանդի, Քուվեյթի Պետության, Նորվեգիայի, Հորդանանի և Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ, որի արդյունքում 10 պատվիրակությունների հետ ազատականացման նպատակով ստորագրվել են փոխըմբռնման հուշագրեր կամ

հանդիպման արձանագրություններ առավելապես հանելով երկկողմանի համաձայնագրերում առկա սահմանափակումները, ինչպես նաև ձեռք են բերվել պայմանավորվածություններ յուրաքանչյուր կողմի ներպետական ընթացակարգերով նախատեսված անհրաժեշտ բոլոր քայլերի ձեռնարկման համար:

Գլխավոր վարչության համապատասխան մասնագետները մասնակցել են «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) և Միացյալ ավիացիոն իշխանությունների (ՄԱԻ) ուսումնական կենտրոն» կազմակերպությունների կողմից 2012 թվականի համագործակցության ծրագրի շրջանակներում անդամ-երկրներին առաջարկված ուսումնական դասընթացներին:

Գլխավոր վարչությունը թոփաքների անվտանգության մակարդակի բարձրացման համար և թոփաքային պիտանիության հարցերով շարունակել է համագործակցությունը միջազգային և օդանավ արտադրող կազմակերպությունների հետ:

Շարունակվել է համագործակցությունը ՌԴ Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության միջև: Այդ համագործակցության շրջանակներում Գլխավոր վարչությունը ստացել է առաջարկություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին 2014-2015 ուսումնական տարվանից ընդունել Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) Թոփաքային ապարատների շահագործման բաժին՝ ուսուցումը իրականացնելով ՌԴ բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակով Գլխավոր վարչության կողմից տրվել է մրցույթի հայտարարություն, իրականացվել է մրցույթ, որի արդյունքում առավելագույն միավորներ հավաքած 4 դիմորդների փաստաթղթերը ներկայումս ուսուցանում են վերոնշյալ ուսումնական հաստատությունում:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով ԻԿԱՕ և Թոփաքային անվտանգության եվրոպական գործակալության (ECAC) Միջպետական ավիացիոն կոմիտեի (MAK) նկատմամբ 2014 թվականի պարտավորությունները կատարված են:

Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրենց գործառույթներն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ՝ աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Պարբերական վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների և ավիաընկերությունների շահագործողական վիճակների նկատմամբ:

2014 թվականին Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից, անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 4225 գրությունների:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով հաշվետու տարում ակտիվ համագործակցել է ՋԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող Գլխավոր վարչության նորացված և

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1521 որոշման պահանջներին համապատասխանեցված պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվել են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող նորությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են իրավական ակտերի հետ կապված հետևյալ աշխատանքները.

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել

1. «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող եվ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում եվ գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից և 18.12.2014 թվականից ուժի մեջ է մտել:

2. «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

3. «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացվել հետևյալ նորմատիվային որոշումների նախագիծերը.

1. «ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշումը, որն ընդունվել է 2014 թվականի հունիսի 12-ի N 608-Ն որոշմամբ:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի N 202-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում, որն ընդունվել է 2014 թվականի օգոստոսի 14-ի թիվ 859-Ն որոշմամբ:

3. «ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի թիվ 1229-Ն և ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 13-ի թիվ 202-Ն որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում, որն ընդունվել է 2014 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1022-Ն որոշմամբ:

4. «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում գտնվող երկու բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերի և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

5. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, որն ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 1094-Ն որոշմամբ:

6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 777-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ներկայացվել և պետական գրանցում են ստացել Գլխավոր վարչության պետի հետևյալ նորմատիվային գերատեսչական իրավական ակտերը.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի հունվարի 9-ի թիվ 7-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014 թվականի հունվարի 10-ի թիվ 1-Ն հրամանը:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2005 թվականի օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի օդանավերի զննման կանոնները հաստատելու մասին» N 102-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի օդանավերի զննման կանոններ»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014 թվականի հունվարի 16-ի N 2-Ն հրամանը:

3. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի ապրիլի 20-ի թիվ 58-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի Գլխավոր վարչության պետի 2014 թվականի ապրիլի 4-ի N 101-Ն հրամանը:

4. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N 212-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014թ. թվականի ապրիլի 25-ի N 125-Ն հրամանը:

5. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի մարտի 13-ի N 41-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Գլխավոր վարչության պետի 2014 թվականի հունիսի 26-ի N 170-Ն հրամանը:

6. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի ապրիլի 20-ի թիվ 58-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014 թվականի հուլիսի 29-ի N 189-Ն հրամանը:

7. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 192-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014 թվականի նոյեմբերի 4-ի N 276-Ն հրամանը:

8. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 188-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 277-Ն հրամանը:

9. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 182-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 289-Ն հրամանը:

10. Գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի «Օդանավ շահագործողի

վկայականի նկատմամբ ներկայացվող պահանջների ու դրա տալու կարգը սահմանելու մասին» թիվ 296-Ն համատեղ հրամանը, գտնվում է գրանցման փուլում:

11. Գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «Ավիափոխադրողի մասնագրի նկատմամբ ներկայացվող պահանջների ու դրա տալու կարգը սահմանելու մասին» թիվ 297-Ն համատեղ հրամանը, գտնվում է գրանցման փուլում:
12. Գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետությունում օդային ուղիների շահագործման թույլտվությունների տրման պահանջների և պայմանների կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 298-Ն համատեղ հրամանը, գտնվում է գրանցման փուլում:
13. Գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «Օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետություն կանոնավեր և ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 299-Ն համատեղ հրամանը, գտնվում է գրանցման փուլում:
14. Գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության բժշկական հաստատություններին քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված պահանջներին համապատասխանության վկայականների տրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 10-ի թիվ 53-ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 301-Ն հրամանը, գտնվում է գրանցման փուլում:
15. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 25-ի թիվ 65-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Գլխավոր վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 302-Ն հրամանը, գտնվում է գրանցման փուլում

ԹՈՒՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. 2014 թվականին տրվել են քաղաքացիական օդանավի թռիչքային պիտանիության 43 սերտիֆիկատ և օդանավի ադմուլի 10 սերտիֆիկատ, ինչպես նաև՝ օդանավի ռադիոկայանի 51 վկայական ու օդանավի թռիչքի 9 թույլտվություն:

2. 2014 թվականին Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է 35 օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրից հանվել է 14 օդանավ:

3. Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի թվով 31 տեսչական ստուգումներ են կատարվել Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել են օտարերկրյա օդանավերի թվով 60 ստուգումներ, համաձայն SAFA ծրագրի, և կատարված ստուգումների հաշվետվությունները գրանցվել են տվյալների բազայում:

5. Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ընկերությունների կողմից վտանգավոր բեռների օդային փոխադրման սպասարկման աշխատանքների վերաբերյալ ուսումնասիրություններ և տրվել է 3 թույլտվության վկայական:

6. Գլխավոր վարչության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում կատարվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների բազաների և գծային կայանների մի շարք ուսումնասիրություններ և տրվել է թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության 6 և օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպության 6 սերտիֆիկատներ:

ԹՈՒՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվետու ժամանակահատվածում տրվել է թվով 95 վկայականներ ու 32 այլ թույլտվություններ թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական կազմին, բորտուղեկցորդներին
2. Ճանաչվել (լեզալիզացվել) են այլ երկրների ավիացիոն իշխանությունների կողմից տրված թռիչքային անձնակազմի անդամների 111 վկայական:
3. Ապահովվել են մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի հետ տեղի ունեցած միջադեպերի քննության հանձնաժողովի աշխատանքներին:
4. 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տրասեկա ծրագրով ԵՄ ավիացիոն ուսումնական հաստատություններում թվով 5 աշխատակից մասնակցել են վերապատրաստման դասընթացների և ստացել համապատասխան սերտիֆիկացում:

ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԵՎ ՕՂԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Ձմեռային ժամանակաշրջանում սահմանվել է վերահսկողություն «Ձվարթնոց» օդանավակայանի աերոդրոմի շահագործողական վիճակի պահպանման նկատմամբ:
2. Ուսումնասիրվել և ներկայացվել է եզրակացություն «Ձվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմին հրշեջ պաշտպանության 9-րդ կարգ շնորհելու վերաբերյալ:
3. Ուսումնասիրվել և ներկայացվել է եզրակացություն «Շիրակ» միջազգային օդանավակայանի աերոդրոմին հրշեջ պաշտպանության 6-րդ կարգ շնորհելու վերաբերյալ:
4. Մշակվել և ԻԿԱՕ է ներկայացվել տարեկան հաշվետվություն ՀՀ-ում 2013 թվականին թռչունների հետ օդանավերի բախումների վերաբերյալ:
5. Ուսումնասիրվել և ներկայացվել է տեղեկատվություն «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից «Ձվարթնոց» օդանավակայանի տարածքում մինչ օրս իրականացված քանդման, վերակառուցման և շինարարական աշխատանքների և դրանց ներկայիս կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման մասին:
6. Ապահովվել է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Գույք հանձնելու մասին» N222-Ա որոշման կատարումը. «Հայաէրոնավիգացիա» ՓԲ

ընկերության 265⁰ ՄՈՒ առբերիչ ռադիոփարոսը փոխանցվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

7. Թվով 86 օդային երթուղիների կարգավարների տրամադրվել է նոր նմուշի վկայականներ: Ապահովվել է թվով 77 ՕԵԿ կարգավարների թեստավորման և վկայականի գործողության ժամկետի երկարաձգման, թվով 9 ՕԵԿ կարգավարների թեստավորման և վկայականի տրամադրման, թվով 6 ՕԵԿ կարգավարների նոր թույլտվության նիշի թեստավորման և վկայականի տրամադրման և թվով 2 ՕԵԿ ուսանող-կարգավարների վկայականի տրամադրման գործընթացը:
8. Ուսումնասիրվել և ներկայացվել է եզրակացություն Մեդրի քաղաքի օդանավակայանը քաղաքացիական ավիացիայի նպատակներով շահագործելու ՀՀ ՊՆ առաջարկության վերաբերյալ:
9. Ապահովվել է ՀՀ կենտրոնական բանկի <<Դիլիջան>> ուսումնասիտազոտական կենտրոնի ուղղաթիռահրապարակի սերտիֆիկացման գործընթացը: Գլխավոր վարչության պետի 2014 թվականի օգոստոսի 1-ի թիվ 193-Ա հրամանով ուղղաթիռահրապարակին շնորհվել է սերտիֆիկատ:

ՕՂԱՅԻՆ ՓՈԽԱՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. Հաշվետու ժամանակահատվածում երկարացվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 8 (ութ) օդանավ շահագործողների «Օդանավ շահագործողի վկայական»-ների գործողության ժամկետները՝
<<Ատլանտա Յուրոփիան Էյուէյս>> ՍՊԸ 18.02.2014թ. թիվ 35-Ա հրաման
<<Արմենիա>> Էյրվեյզ>> ՍՊԸ 25.02.2014թ. թիվ 87-Ա հրաման
<<Սկիվա Էյր>> ՍՊԸ 26.02.2014թ. թիվ 92-Ա հրաման
<<Էյր Արմենիա>> ՓԲԸ 02.04.2014թ. թիվ 99-Ա հրաման
<<Մաութ Էյրլայնզ>> ՍՊԸ 30.04.2014թ. թիվ 131-Ա հրաման
<<Վետերան Ավիա>> ՍՊԸ 09.07.2014թ. թիվ 181-Ա հրաման
<<Տարոն Ավիա>> ՍՊԸ 12.08.2014թ. թիվ 204-Ա հրաման
<<Ռիլայթ Յունիթ Սերվիսիզ Ավիեյշն>> ՍՊԸ 17.10.2014թ. թիվ 252-Ա հրաման

2. Կասեցվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 1 (մեկ) օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի գործողությունը
<<Սքայ Նետ Էյրլայն>> ՍՊԸ 11.06.2014թ. թիվ 156- Ա հրաման
3. Դադարեցվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 2 (երկու) օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի գործողությունը
<<Հայք Ավիա>> ՍՊԸ 23.05.2014թ. թիվ 145- Ա հրաման
<<Սքայ Նետ Էյրլայն>> ՍՊԸ 12.12.2014թ. թիվ 308- Ա հրաման

4. Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 1 (մեկ) օդանավ շահագործողին տրամադրվել է նոր «Օդային ուղու շահագործման թույլտվություն»- եր

| | | |
|---------------------|------------------------|-----------------------|
| <<Էյր Արմենիա>> ՓԲԸ | 21.01.2014թ. թիվ 6-Ա | Երևան-Աթենք-Երևան |
| | 21.01.2014թ. թիվ 6-Ա | Երևան-Փարիզ-Երևան |
| | 06.02.2014թ. թիվ 18-Ա | Երևան-Թեհրան-Երևան |
| | 22.04.2014թ. թիվ 120-Ա | Երևան-Բարսելոնա-Երևան |

09.07.2014թ. թիվ 182-Ա Երևան-Բեյրութ-Երևան
09.07.2014թ. թիվ 182-Ա Երևան-Էրբիլ-Երևան
09.07.2014թ. թիվ 182-Ա Երևան-Ֆրանկֆուրտ-Երևան
14.08.2014թ. թիվ 205-Ա Երևան-Նովոսիբիրսկ-Երևան
09.07.2014թ. թիվ 182-Ա Երևան-Բեյրութ-Երևան

5. Համաձայն ներկայացված հայտերի՝ իրականացվել են դեպի Հայաստանի Հանրապետություն կանոնավոր չվերթներ իրականացնող օտարերկրյա ավիափոխադրողների 2014թվականի չվացուցակների համակարգման աշխատանքներ: Ամառ-2014 աերոնավիգացիոն շրջանի համար թվով 35 ավիաընկերությունների տրվել է կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն՝ 57 երթուղով, շաբաթական ընդհանուր վերցրած 256 չվերթ իրականացնելու համար:

Աշուն/Ձմեռ-2014/2015 աերոնավիգացիոն շրջանի համար թվով 27 ավիաընկերություն տրվել է կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն՝ թվով 40 երթուղու համար: Ներկայումս փաստացի չվերթներ են իրականացնում թվով 29 ավիաընկերություններ, թվով 38 երթուղու վրա, շաբաթական թվով 174 չվերթ:

6. Իրականացվել են ոչ կանոնավոր չվերթերի թույլտվության համար Գլխավոր վարչությանը ներկայացված հեռագրերի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն և տրամադրվել է թվով 591 ոչ կանոնավոր չվերթերի թույլտվություն:

7. Իրականացվել է օտարերկրյա ավիաընկերությունների Հայաստանի Հանրապետություն կանոնավոր և ոչ կանոնավոր (չարտերային) չվերթերի իրականացման համար ներկայացրած անհրաժեշտ փաստաթղթերի և դրանց կից փաթեթի ուսումնասիրություն և համապատասխան տվյալների մուտքագրում էլեկտրոնային տվյալների բազա՝ հետևողականությունը ապահովելու նպատակով:

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ավիացիոն անվտանգության վարչության կողմից ուսումնասիրվել է <<Էյր Արմենիա>>, <<Սքայ Նեթ>>, <<Արմենիա Էյրվեյզ>>, <<Վետերան ավիա>>, <<Սկիվա Էյր>>, <<Արմենիա Էյրվեյզ>>, <<Սաութ Էյրլայնզ>>, <<Ատլանտիս Յուրոփեան Էյրվեյզ>> ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը և ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի դրույթներին դրանց համապատասխանության վերաբերյալ ներկայացվել է համապատասխան եզրակացություն:

ԻԿԱՕ <<Անվտանգություն>> N17 հավելվածի և ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգությանն ազգային ծրագրի պահանջներին համապատասխանության նպատակով ուսումնասիրվել են նաև օտարերկրյա՝ <<Ավստրիական ավիաուղիներ>>, <<LOS Փոլիշ Էյրլայնզ>>, <<Տրանսաերո>>, <<Թայմիր>>, <<Յակուտիա>>, <<Իր ավիա>>, <<Թաթարստանի ավիաուղիներ>>, <<Տրանսաերո>>, <<Գրոզնի ավիա>>, <<Արկիա>>, <<Ռուս լայն>>, <<Վիմ ավիա>>, <<Էգեյան>>, <<Ատլաս Ջեթ>>, <<Էյր Արաբիա>>, <<Էթիհադ Էյրվեյզ>>, <<Բուրդարիան Էյր>>, <<Մոնտենեգրո Էյրլայնս>>, <<Մահան Էյր>>, <<Ղեշմ Էյր>>, <<Էգեան Էյրլայնս>>, <<Էյր Յուրոփեա>>, <<ԱՄՄ>>, <<Ակ Բարս>>, <<Փերթոլիում Էյր սերվիսիզ>>, <<Վելինգ>>, <<Ֆլայ Դուբայ>>, <<Էյր Կահիրո>>, <<Ջորդան ավիացիոն>> ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը և ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի դրույթներին դրանց համապատասխանության վերաբերյալ ներկայացվել են համապատասխան եզրակացություններ:

2014թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է ավիացիոն անվտանգության մասով տեսչական ստուգումներ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» («Զվարթնոց», «Շիրակ»), «Զվարթնոց Հենդլինգ», «Հայաերոնավիգացիա», «Ավիասերվիս» և «Էյ Դի Ֆի շոփս» ՓԲ ընկերություններում, «Էյր Արմենիա», «Սաութ Էյրլայնս», «Սքայ նեթ», «Տարոն ավիա», «Սկիվա Էյր», «Վետերան ավիա», «Արմենիա Էյրվեյզ» ավիաընկերություններում և բացահայտված թերությունների ու անհամապատասխանությունների մասով համապատասխան առաջարկությունները ներկայացվել են վերը նշված ընկերությունների տնօրինություններին:

ԻԿԱՕ «Անվտանգություն» N17 հավելվածի, ԵԿԱԿ «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի» դրույթներին «Զվարթնոց» օդանավակայանում օտարերկրյա ավիաընկերությունների չվերթերի ուղևորների հաշվառման գործընթացի, ուղևոր-ուղեբեռ համապատասխանության, անձնակազմերի անդամների կողմից օդանավերի նախաթռիչքային զննման ընթացակարգերի համապատասխանության ուսումնասիրման նպատակով տեսչական ստուգումներ են իրականացվել «Աերոֆլոտ», «Սիբիր», «Ավստրիական ավիաուղիներ», «Էյր Ֆրանս», «Չեխական ավիաուղիներ», «Տրանսաերո», «Էյր Արմենիա», «Ռուս լայն», «Ուկրաինական միջազգային ավիուղիներ», «Դենպր ավիա», «Բելավիա», «Ուրալյան ավիաուղիներ», «Ատլաս Ջեթ», «Թայմիր», «Էյր Արաբիա», «Ֆլայ Դուբայ», «Միդլ Իստ Էյրվեյջս», «Վիմ ավիա», «Բելավիա», «Ասեման», «Մահան Էյր», «Լօթ Փոլիշ Էյրլայնս» օտարերկրյա ավիաընկերություններում և տեսչական ստուգումների արդյունքների մասին Գլխավոր վարչության պետին են ներկայացվել վերը նշված ավիաընկերությունների կողմից իրականացվող անվտանգության միջոցառումների համապատասխանության վերաբերյալ եզրակացությունները, ինչպես նաև Գլխավոր վարչության պետի հանձնարարությամբ տեսչական ստուգման արդյունքները համապատասխան գրությամբ ներկայացվել են վերը նշված ընկերությունների տնօրինություններին:

Շարունակական ուսումնասիրություններ են իրականացվել ուղևորների սպասարկման գործընթացների նկատմամբ, բարձր ուղևորային ծավալների ժամանակաշրջանում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն՝ Ամանորի տոնական օրերին, ինչպես նաև 2014թ. փետրվարի 1-ից մինչև մարտի 31-ը Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարության խնդրանքով ավիացիոն անվտանգության լրացուցիչ միջոցառումներ են կիրառվել ՌԴ Սոչի, Կրասնոդար, Մինսկի քաղաքներ մեկնող չվերթերի նկատմամբ՝ Ձմեռային Օլիմպիական խաղերի ժամանակաշրջանում:

2014թ. հուլիս- օգոստոս ամիսների ընթացքում կազմակերպվել և անցկացվել է «Արմենիա միջազգային օդանավակայաններ» («Զվարթնոց», «Շիրակ» օդանավակայաններ) թվով 48 և «Հայաերոնավիգացիա» ՓԲ ընկերությունների ավիացիոն անվտանգության ծառայությունների թվով 22 աշխատակիցների աստեստավորում, որի արդյունքներով 70 աշխատակիցներ ստացել են համապատասխանության սերտիֆիկատներ:

2014 թվականի ընթացքում Գլխավոր վարչություն են ստացվել 71 հայտ թռիչքային անցագրերի տրամադրման համար, պատրաստվել և ավիաընկերությունների օդանավերի անձնակազմերի անդամներին է հատկացվել 227 թռիչքային անցագրեր:

2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Նախագահի և արտասահմանյան երկրների բարձրաստիճան ղեկավարների, ԱԺ նախագահի, Վարչապետի մեկնումների և ժամանումների ընթացքում իրականացվել են միջոցառումներ՝

կապված չվերթերի անվտանգության ապահովման հետ: Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է 52 Լիտեր <<Ա>> և 16 հատուկ չվերթերի սպասարկում:

Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններով և Հայաստանի Հանրապետության օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման 41 հայտ, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկներ փոխադրման թույլտվություններ տրամադրելու վերաբերյալ:

2014թ. դեկտեմբերի 4-5-ը <<Ադետներին պատրաստ օդանավակայաններ>> ծրագրի շրջանակներում <<Արմենիա>> ՄՕ ՓԲԸ վթարափրկարարական ստորաբաժանումների և քաղաքաշտպանության իմբերի, ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարության, ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի և ԳԴՀ DHL փոստային ծառայության ստորաբաժանումների հետ համատեղ <<Զվարթնոց>> օդանավակայանում անցկացվել է <<Զվարթնոց>> օդանավակայանում առաջացած արտակարգ իրավիճակներում <<Արմենիա>> ՄՕ ՓԲԸ վթարափրկարարական ստորաբաժանումների և պետական մարմինների համապատասխան ստորաբաժանումների համագործակցությունը>> թեմայով ուսումնավարժանք:

<<Զվարթնոց>> օդանավակայանից 2014 թվականի ի ընթացքում գննվել և մեկնել է 454.656 ուղևոր, նրանց ձեռքի իրերի և ուղեբեռների գնման ընթացքում հայտնաբերվել է.

- 1/ 07.03.2014թ. բեռնային համալիրում ծանրոցի մեջ հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրանյութ 1,42 գրամ, և 5.66 գր. թմրանյութի յուղ, հանձնված է ոստիկանության բաժին,
- 2/ 26.04.2014թ. Երևան-Կիև N 612 չվերթի ուղևոր Սանարա Մասարվա Ամալի ուղեբեռի մեջ հայտնաբերվել է 23 հաբ` Ֆենազեպան, Կլոնազեպան և 51 հաբ` Դիազեպան, հանձնված է ոստիկանության բաժին,
- 3/ 07.05.2014թ. Երևան-Եկատերինբուրգ N 2950 չվերթի ուղևոր Վահագն Հակոբյանի ուղեբեռում հայտնաբերվել է 144 հաբ` Դիազեպան, հանձնված է ոստիկանության բաժին,
- 4/ 12.03.2014թ. Երևան-Հոնոլուլու N 557 ուղևոր Աստարիտա Զիանկառյուկի ուղեբեռում հայտնաբերվել է 4 հատ 12մմ տրամաչափի փամփուշտ, հանձնված է ոստիկանության բաժին,
- 5/ 19.04.2014թ. Երևան-Մոսկվա N 910 չվերթի ուղևոր Դավիթ Ցակալյանի ուղեբեռում հայտնաբերվել է 1 հատ 7.62 տրամաչափի փամփուշտ, հանձնված է ոստիկանության բաժին,
- 6/ 23.04.2014թ. Երևան-Մոսկվա N 910 չվերթի ուղևոր Գրիգոր Զեյնալյանի ուղեբեռում հայտնաբերվել է 1 հատ փամփուշտ, հանձնված է ոստիկանության բաժին,
- 7/ 02.05.2014թ. Երևան-Մոսկվա N 910 չվերթի ուղևոր Տիգրան Վանեսյանի ուղեբեռում հայտնաբերվել է 3 հատ ռազմական փամփուշտ 5.45 տրամաչափի, հանձնված է ոստիկանության բաժին,
- 8/ 07.05.2014թ. Երևան-Վիեննա N 642 չվերթի ուղևոր Սոնա Հակոբյանի ուղեբեռում հայտնաբերվել է 1 հատ 7.62 տրամաչափի փամփուշտ, հանձնված է ոստիկանության բաժին,
- 9/ 23.05.2014թ. Երևան-Բեյրութ N 276 չվերթի ուղևոր Ադասի Մարտիրոսյանի ուղեբեռում հայտնաբերվել է 3 հատ փամփուշտ, հանձնված է ոստիկանության բաժին
- 10/ 24.05.2014թ. Երևան-Ռոսստով N 730 չվերթի ուղևոր Ալեքսեյ Բելիկովի ուղեբեռում հայտնաբերվել է 1 հատ փամփուշտ, հանձնված է ոստիկանության բաժին,
- 11/ 25.05.2014թ. Երևան-Մոսկվա N 906 չվերթի ուղևոր Մանվել Իսոյանի ուղեբեռում հայտնաբերվել է 1 հատ փամփուշտ, հանձնված է ոստիկանության բաժին:
- 12) գողության փորձեր - 0,

13) դյուրավառ հեղուկներ - 48 լիտր /տնական օդի/,

15) անցագրային վերահսկողության խախտում - 1 դեպք /Ալավերդյան Դավիթ/:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանում պահպանության տակ վերցված է 213 օբյեկտ, հակահրդեհային պահպանության տակ վերցված է 74 օբյեկտ, գործում է 223 տազնապի ազդանշանային համակարգ, այդ թվում պահպանության 139 և հրդեհի 64 ազդանշան: Գործում է փակ հեռուստահսկման համակարգը /433 տեսախցիկ/, որի միջոցով իրականացվում է հսկողություն ուղևորների, բեռների, փոստի, օդանավերի վերգետնյա սպասարկումների ողջ գործընթացի և օդանավակայանի վերահսկելի գոտիներում օբյեկտների պահպանության, անցագրային ու ներօբյեկտային վերահսկողության կանոնների պահպանման նկատմամբ:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի վթարափրկարարական /հակահրդեհային/ ծառայությունն իրեն վերաբերվող մասով ապահովել է.

ա/ Լիտեր <<Ա>> չվերթեր - 26,

բ/ օդանավերի լիցքավորման աշխատանքներ - 52,

գ/ հարկադիր վայրէջքներ - 0,

դ/ շինվերանորոգման և եռակցման հակահրդեհային ապահովում - 2,

ե/ հրդեհներ- /խոտի այրման դեպքեր/ - 15:

<<Շիրակ>> օդանավակայանից 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գննվել և մեկնել է 11.237 ուղևոր, նրանց ձեռքի իրեր և ուղեբեռների գնման ընթացքում հայտնաբերվել է.

- արգելված իրեր-/դանակներ, մկրատներ, խարտոցներ և այլն/ - 47 հատ,

- դյուրավառ հեղուկներ - 22 լիտր,

Պահպանության է վերցված 23 օբյեկտ, գործում է 2 պահպանության ազդանշանային համակարգ: Գործում է փակ հեռուստահսկման համակարգը /16 տեսախցիկ/, որի միջոցով իրականացվում է հսկողություն ուղևորների սպասարկման ողջ գործընթացի և օդանավակայանի վերահսկելի գոտիներում անցագրային ու ներօբյեկտային վերահսկողության կանոնների պահպանման նկատմամբ: Օդանավակայանում հրդեհի դեպքեր չեն գրանցվել:

2014թ. առաջին կիսամյակի ընթացքում անհրաժեշտ աշխատանքներ են տարվել քաղաքացիական ավիացիայի համակարգում աշխատող զինապարտ պահեստագրայինների ցուցակների ճշտագրման ուղղությամբ, համապատասխան զինկոմիսարիատներ են ներկայացվել համակարգի կազմակերպությունների 47 աշխատողների վերաբերյալ տվյալներ: Պարբերաբար իրականացվել է <<Զվարթնոց>> օդանավակայանի վթարա-փրկարարային հաշվարկների մարտունակության վիճակի ուսումնասիրություններ փորձական տազնապանների հայտարարման միջոցով /7 անգամ/:

2014թվականի ընթացքում մշակվել և Գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել է <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության քաղաքաշտպանության Պլանը>>: Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թվականի մարտի 28-ի <<Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու ծրագիրը հաստատելու մասին>> N306 ԱԳ որոշման 17-րդ կետի պահանջների համաձայն <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքում կազմակերպվել և անցկացվել է քաղաքաշտպանության ուժերի երկու ուսումնավարժանք << Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի քաղաքաշտպանության կազմավորումների միջև կապի և փոխհամագործակցությանն ուղղված միջոցառումների իրականացումը պետությունը պաշտպանությանը նախապատրաստելու աշխատանքների շրջանակներում>> թեմայով,

ուսումնավարժանքի արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

Իրականացվել է քաղաքացիական ավիացիայի համակարգում պետական պահուստի առկա գույքի և նյութերի պահպանության, ապաստարանների, կառավարման հրամանատարական կետի վիճակի գույքագրում և համապատասխան արձանագրությունը ներկայացվել են Գլխավոր վարչության պետին:

2014թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ

1. 2014 թվականի ընթացքում ապահովել է ՀՀ օդանավակայաններ չվերթող օդանավերի թռիչք-վայրէջքների աերոնավիգացիոն սպասարկում՝ թռիչք – վայրէջք 10553, տարանցիկ թռիչքներ – 29230:
2. 161 օդային երթևեկության կարգավարներ անցել են ընդհանուր մասնագիտական ուսուցում և վերապատրաստում
3. «THALES» ընկերության մասնագետի մասնակցությամբ կատարվել է «Շիրակ» օ/կ-ի DVOR/DME և «Զվարթնոց» օ/կ-ի ILS/DME սարքավորումների տեխնիկական փորձաքննություն, համաձայն հետերաշխիքային պայմանագրի:
4. «Park Air Systems» ընկերության մասնագետի մասնակցությամբ կատարվել է ՎՌԿ «Մոսկվան», ՎԿ «Անդրանիկ», ՌՀԿ, «Աշտարակ» և ՌԸԿ օբյեկտների գերկարճալիք սարքավորումների տեխնիկական փորձաքննություն, համաձայն հետերաշխիքային պայմանագրի:
5. Իրականացվել է լրացուցիչ պահուստային ալեհավաքի տեղակայում և նոր մալուխի անցկացում «Աշտարակ» կարգավարական սրահի տանիքում «Park Air Systems» ռադիոկայանների համար:

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ

2014 թվականին «Ավիաուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորել են 105 ուսանող և վերապատրաստվել 445 ավիացիոն մասնագետներ (օդաչուներ, կարգավարներ, ավիաինժեներներ, ավիատեխնիկներ, ավիաընկերությունների ներկայացուցիչներ և բորտ-ուղեկցորդներ):

«Ավիարուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

2014 թվականին բժշկական հետազոտության են ենթարկվել 116 օդաչու, 52 բորտուղեկցորդ, 85 կարգավար, 1870 վերգետնյա ծառայության աշխատողներ, իրականացվել է 13035 աշխատողի նախահերթափոխային և նախաթռիչքային բժշկական ստուգում և 2200 սանիտարական հետազոտություն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի
2010-2014 թվականների հիմնական արտադրական
ցուցանիշներ

| h/h | Ցուցանիշի անվանումը | Չափի միավորը | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2014թ. կատարողական 2013թ. նկատմամբ |
|-----|-------------------------------------|---------------|--------------|---------|--------------|--------------|---------|------------------------------------|
| 1 | Փոխադրված ուղևորներ | հազ.մարդ 1 | 1664.43 5 | 1674.47 | 1763.38 4 | 1758.24 5 | 2082.75 | 118.5 |
| 2 | Փոխադրված բեռ և փոստ | տոննա | 8816 | 10034 | 12283 | 10365 | 10345 | 99.8 |
| 3 | Թռիչք-վայրէջքներ | հատ | 10056 | 10164 | 10646 | 8953 | 10553 | 117.9 |
| 4 | ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր | չվերթ | 32504 | 36264 | 34244 | 34513 | 29230 | 84.7 |